


**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

03.06.2014 13:57



ՀՀ փաստաբանական դպրոցը հունիսի 05-ից հունիսի 16-ը ներառյալ հայտարարում է 2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունն առնվազն տասը տարվա փաստաբանի կամ դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող հատուկ դիմորդների համար: Դիմումներն ընդունվում են երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-18:00, շաբաթ օրը՝ 10:00-15:00, հանգստյան օր՝ կիրակի:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (098) 655-601, (055) 320-052, (096) 200-625 կամ (010) 606-609 հեռախոսահամարներով, գրել info@advschool.am էլ. հասցեին, այցելել www.advocates.am կայքէջ կամ ՀՀ փաստաբանական դպրոց (հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 2, 3-րդ հարկ):

ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությունը, ընդունելության քննության կարգը, դիմումի և ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկի ձևերը տեղադրված են [www.advocates.am](http://www.advocates.am) կայքէջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը սահմանել է.

1. Հատուկ դիմորդների քանակական կազմը՝ 24 (քսանչորս), որից՝
  - 1) դատախազի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 6 (վեց)
  - 2) փաստաբանի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 6 (վեց)
  - 3) դատավորի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցողների համար՝ 6 (վեց)
  - 4) իրավաբանական գիտությունների թեկնածուի, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցողների համար՝ 6 (վեց)
2. Ունկնդիրների ուսման վարձի չափը՝ հատուկ դիմորդի ծրագրով պարզեցված ընթացակարգով ուսուցման դեպքում՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ԶԵԿ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ

## ԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Նախորդ նորությունը:** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ON-LINE ՀԵՌԱՐՁԱԿԿԵԼՈՒ Է

### Առաջարկվող նորություններ




**06.11.2013**  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ



**09.12.2013** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 07.12.2013թ «ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՄԱՍԻՆ» N 01 ՈՐՈՇՈՒՄԸ



**22.01.2014** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ON-LINE ՀԵՌԱՐՁԱԿԿԵԼՈՒ Է



**01.05.2014** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԱԿՑԻԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ